ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

19 մայիսի 2026թ. **N 179-Ա**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ 13.05.2026Թ. ԴԻՄՈՒՄՈՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՐՈՒՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով «Երիտասարդական ակումբների դաշնություն» հասարակական կազմակերպության դիտորդական առաքելության ղեկավար Ս. Համբարձումյանի 13.05.2026թ. դիմումը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Դիմումատուի իրավական դիրքորոշումը և ներկայացված պահանջը

«Երիտասարդական ակումբների դաշնություն» հասարակական կազմակերպության դիտորդական առաքելության ղեկավար Ս. Համբարձումյանի (այսուհետ նաև՝ դիմումատու) 13.05.2026թ. դիմումում նշված է.

«Սույնով ցանկանում ենք Ձեր ուշադրությունը հրավիրել «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության կողմից ընտրական գործընթացում «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի կազմում դիտորդական առաքելություն իրականացնելու համապատասխանության հարցին՝ Ընտրական օրենսգրքով սահմանված պահանջների տեսանկյունից: Ընտրական օրենսգրքի 30-րդ հոդվածով սահմանվում է դիտորդների կարգավիճակը և նրանց գրանցման հիմքերը, իսկ 31-րդ հոդվածով՝ դիտորդների իրավունքներն ու պարտականությունները: Վերջինիս տրամաբանությունից բխում է, որ դիտորդները պարտավոր են իրենց գործունեությունն իրականացնել այնպես, որ չխոչընդոտեն ընտրական գործընթացը և չազդեն դրա մասնակիցների վրա, ինչը ենթադրում է նաև չեզոքության և անկողմնակալության պահպանում: Սակայն առկա են մի շարք հանգամանքներ, որոնք կարող են առաջացնել ողջամիտ կասկածներ նշված կազմակերպության կողմից այդ սկզբունքների լիարժեք պահպանման վերաբերյալ: Նախ, «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի ներկայացուցիչ Դանիել Իոաննիսյանը (ինչպես նաև «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի մեկ այլ ներկայացուցիչ) ներգրավված է Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի կազմում, որը ձևավորվել է գործադիր իշխանության ղեկավարի՝ վարչապետի որոշմամբ: Հաշվի առնելով, որ վերջինս գլխավորում է ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերից մեկի ընտրական ցուցակը, ապա տվյալ հանգամանքը կարող է շահերի բախման և անկողմնակալության վերաբերյալ ողջամիտ կասկած հարուցել: Երկրորդ, կազմակերպությունը հանդես է եկել հրապարակային քաղաքական

դիրքորոշումներով՝ միանալով հասարակական կազմակերպությունների հայտարարությանը (Հղում 1), որը պարունակում է պետական կառավարման համակարգի վերաբերյալ քաղաքական գնահատականներ և պահանջներ: Սա վկայում է, որ կազմակերպությունը ներգրավված է հանրային քաղաքական օրակարգի ձևավորման գործընթացում:

Ավելին, նշված հայտարարության մեջ տեղ գտած «20 տարվա իշխանության զավթման» վերաբերյալ գնահատականը վերաբերում է նաև այն ժամանակահատվածին, երբ Հայաստանի Հանրապետության նախագահ է եղել Ռոբերտ Քոչարյանը, ով ընթացիկ ընտրական գործընթացի մասնակից է և ղեկավարում է մեկ այլ քաղաքական ուժի ընտրական ցուցակ: Այս հանգամանքը կարող է առաջացնել ողջամիտ կասկած կազմակերպության կողմից առանձին ընտրական սուբյեկտների նկատմամբ կանխակալ վերաբերմունքի վերաբերյալ:

Մայիսի 4-ին Դանիել Իոաննիսյանն Ֆեյսբուքի էջում երկու գրառում է արել Կ.Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի մոտ Եվրոպական համայնքի գագաթնաժողովի առիթով տեղի ունեցող ցույցի մասին՝ գրելով.

1. «300 հոգին մի քանի հազար մարդու շուխուռ են հանում, մի 20 հազար մարդու չափ էլ հիստերիա»: (Հղում 2)

2. «Այսօրվա միջոցառումը զուգորդվում էր ռուսաստանյան ծագման ստերի, մանիպուլացիաների, ԱԲ-գեներացրած ֆեյքերի, ինչպես նաև տրոլերի կազմակերպված խմբերի գործողություններով…» (Հղում 3)

Հաշվի առնելով գրառման բացասական երանգը և այն, որ ցույցին մասնակցում էր նաև Արման Թաթոյանի գլխավորած «Միասնության թևեր»-ը, սա ընտրական օրենսգրքի 30-րդ հոդվածի առերևույթ խախտում է:

Վերոգրյալ հանգամանքների համակցությամբ առաջանում են հիմնավոր հարցադրումներ «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի կողմից ընտրական գործընթացում անկախ և անկողմնակալ դիտորդական առաքելություն իրականացնելու հնարավորության վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը և առաջնորդվելով Ընտրական օրենսգրքի 30-րդ և 31-րդ հոդվածների պահանջներով՝ խնդրում ենք

1. Գնահատել նշված կազմակերպության համապատասխանությունը դիտորդական գործունեության համար անհրաժեշտ չեզոքության և անկողմնակալության չափանիշներին:

2. Քննարկել լրացուցիչ երաշխիքների կամ սահմանափակումների կիրառման հարցը:

Հղում 1 https://a1plus.am/hy/article/360568?fbclid=IwY2xjawRkB6IleHRuA2FIbQIxMQBicmlkETF6ZDV6QUNNekswN2RqbmJrc3J0YwZhcHBfaWQQMjIyMDM5MTc4ODIwMDg5MgABHiQdjTvYZ9y2VUgqGUaNqE4peX8cNabguKz2YYKX5ynBdm_vGLQ2HxGHTk_aem_j2v80UfFotA3aDhVuj4Piw

Հղում 2 https://www.facebook.com/share/p/17QqosWMNC/?mibextid=wwXIfr

Հղում 3 https://www.facebook.com/share/p/1E83sBaaX1/?mibextid=wwXIfr»:

Դիմումին կից ներկայացված է երկու էջ էկրանատպվածք:

2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունները) և եզրահանգումը

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում վարչական վարույթն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, սույն օրենսգրքով սահմանված առանձնահատկություններով և ժամկետներում:»:

Վերոհիշյալ նորմերից բխում է, որ ընտրական հանձնաժողովներում վարչական վարույթի նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի նորմերը կիրառելի են միայն Ընտրական օրենսգրքով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ:

Ընտրական հանձնաժողովներում վարչական վարույթի իրականացման առանձնահատկություններից է նաև Ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերությամբ սահմանված իրավակարգավորումը, որի համաձայն՝ «Դիմումատուի վերաբերյալ տվյալներ չներառող կամ կեղծ տվյալներ ներառող դիմումները, իրավունքի չարաշահմամբ ներկայացված դիմումները, ոչ իրավասու անձի կողմից ներկայացված դիմումները, ինչպես նաև սույն մասի երկրորդ պարբերությամբ սահմանված պահանջների խախտմամբ ներկայացված դիմումները չեն քննարկվում, դրանցով վարչական վարույթներ չեն հարուցվում, և ընտրական հանձնաժողովները որոշում են կայացնում վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին: Այդ դեպքում ընտրական հանձնաժողովն իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ իրականացնելու վարչական վարույթ»:

ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:»:

ՀՀ Սահմանադրության նշված հոդվածը հստակ և աներկբա ամրագրում է, որ վարչական մարմիններից պատշաճ վարչարարություն հայցելու իրավունքից անձը կարող է օգտվել միայն ***իրեն առնչվող գործերով***:

Ելնելով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված պատշաճ վարչարարության իրավունքի իրացմանը ներկայացվող պահանջներից՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև Ընտրական օրենսգրքի իրավակարգավորումների հիմքում դրվել է նույն տրամաբանությունը:

Բողոքին կամ դիմումին ներկայացվող պահանջներից է դիմումը կամ բողոքը իրավասու անձի կողմից ներկայացված լինելը: Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասում օրենսդիրն առանձնացնում է սուբյեկտների հինգ խումբ, որոնց իրավունք է

վերապահում բողոքարկելու ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը):

Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «3. Ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը) կարող է բողոքարկել՝

1) յուրաքանչյուր ոք, ով գտնում է, որ խախտվել կամ կարող է խախտվել իր՝ սույն օրենսգրքով սահմանված սուբյեկտիվ ընտրական իրավունքը.

2) վստահված անձը, եթե գտնում է, որ խախտվել է իր կամ իր վստահորդի՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքը.

3) դիտորդը կամ այցելուն, եթե գտնում է, որ խախտվել է իր՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքը.

4) զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը, եթե գտնում է, որ խախտվել է իր՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքը.

5) ընտրություններին մասնակցող կուսակցության լիազոր ներկայացուցիչը, եթե գտնում է, որ խախտվել է իր կամ իր վստահորդ կուսակցության կամ կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքը:»:

Վերոգրյալից ակնհայտ է, որ դիմումատու «Երիտասարդական ակումբների դաշնություն» հասարակական կազմակերպությունը չի հանդիսանում դիմում ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտ, ուստի, կազմակերպության անունից ներկայացված դիմումը չի համապատասխանում Ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերությամբ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. «Երիտասարդական ակումբների դաշնություն» հասարակական կազմակերպության դիտորդական առաքելության ղեկավար Ս. Համբարձումյանի 13.05.2026թ. դիմումով վարչական վարույթի հարուցումը մերժել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

2026 թվականի մայիսի 19
ք. Երևան